Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

4621

№19.

# ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ

## ՍԳԱՒՈՐԱՑ

՚Ի սահմանի Առաքելական Աւանդութեանց

Կարգաւորեալ Առաջնորդական պարտաւորութեամբ և յորդեալ յառաջաւորաց և Վիճակայնոց համաձայնութեամբ ՚ի Թիֆլիս քաղաքի.

յԱմի Տեառն 1818 և Հայոց 1267 Յունվարի 22.

՚Ի Ներսիսէ Արքեպիսկոպոսէ Հայոց Աշտարակեցւոյ ։

՚Ի Տպարանի Ուսումնարանի Հայոց։

Երկրորդ տպագրութիւն ։

1847 — ռմղզ ։

Ունկնդիր լերուք Առաջնորդաց ձերոց և հպատակ կացէք նոցա. զի նոքա տքնին վասն հոգւոց ձերոց որպէս թէ համարս տալոց իցեն ընդ ձեր։

Եբրայ. ժԳ. 17.

## ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ ՍԳԱՒՈՐԱՑ

’Ի վերայ Առաքելական բանին թէ՝ Զամենայն ինչ փորձեցէք. զբարին ընկալարուք: փորձեալ մեր բազմօք՝ զի արտաքոյ կարգաւորեալ սահմանաց Հայաստան ազանց՝ ’ի միջի մերում հասարակութեան եկամուտ սովորութեանցն հնագունից մնացորդմասունք յաղագս թաղման ննջեցելոց՝ կամ անվայելուչք են քրիստոնէութեան և կամ վնասակարք են ըստ մարմնաւորին և ըստ հոգևորին, որպիսիք են՝ ’ի վախճանիլն ուրուք ’ի տան, կանանց զգենուլն զհանդերձ զարդարանաց. և ներհակ այնմ բանալն զգլուխսն և քրքրելն զհերսն և այնպէս զկոծ դնելն:

Ամենայն բարեկամաց արանց և կանանց գալն յատուկ յատուկ՝ և մի առ մի նոր սուգ յօրինելն առաջի սիրելի ննջեցելոց մօրն կամ հօրն և կամ այլ մերձաւոր ընտանեացն:

Հանելն կանանց ’ի տանէ զգազաղն՝ և ինքեանց նստիլն ’ի տան և ոչ կամիլն

գնալ ընդ խուրեանց մրական ննջեցելոյն
գանէ մինչև 'ի սուրբ եկեղեցի:

Կանանց բազմութեամբ նստին առ սգաւորսն ղուուրս բազումս. և կրկին ևս բազմաժողով լինին վասն տանելոյ յեկեղեցի՝
և վասն տանելոյ 'ի գերեզման:

Բարեկամաց վարձու կամ քերայով վերարկու բերեն. և քահանայից շարական ասելով տանեն զվերարկու բերոզն յաղագս ողալոյ և կծելոյ 'ի վերայ ննջեցելոյն:

'Ի տանէ ննջեցելոյն քէլէխ բաժանեն բազմութեան բարեկամաց կամ ծանօթից. և հրաւիրեն զբարեկամս և զնախագահ անձինս 'ի վայելել զսեղանս պատրաստեալս յանուն ննջեցելոց:

Եւ բաժանեն ննջեցելոց տեարց ամենայն մերձաւոր ազգականաց. ևս և զայլ ոմանս սոյնպիսիս:

Յաղագս որոյ համաձայն Ռուսաքելտկան հրամանացն համակամ ընտրու է համահաձեալ ընկալնուլ զսալէն, տնօրինեմք:

## Ա.

Զի այսուհետև 'ի վերայ ննջեցելոց կանայք մի ևս զգեցցին զհանդերձ զարդա-

բանայց ըստ առաջին սովորութեանն և մի ևս բացցեն զգլուխս և քրքրեսցեն զհերս. այլ որպէս վայելէ քրիստոնէական համեստութեան՝ իւրաքանչիւրքն իւրեանց ը̅ կարգի արժանաւոր հասարակ հանդերձիւն և առանց բանալոյ զգլուխ և քրքրելոյ զհերսն՝ այնպէս ամ̅ կարելի համեստութեամբ ողջասցեն ըստ օրինի։

## Բ

Զի բարեկամք և սիրելիք ՚ի դուռն առսգաւորին՝ մի՛ ևս ըստ առաջնոյն մի ըղկնի միոյ նստեալ յառաջոյ սգաւորացն՝ ծեծելով զգլուխս իւրեանց և զանազան կսկծեցուցիչ բանաստեղծութեամբ ձրկտեսցին սաստկացուցանել զսուգ և զկոծ սգաւորացն. այլ իւրաքանչիւր որ ը̅ իւրում կարողութեան յիշեցուցանելով նոցա զպարտաւորութիւն քրիստոնէական հաւատոց և զբարի կամսն Աստուծոյ և ստեղծողի՝ որ իշխան է մահու և կենաց ամենայն ստեղծուածոց իւրոց. այլ և զմեծ վայելչութիւն յաւիտենական յուսոյն ամ̅ հաւատացելոց. այնպէս մխիթարութեան

վայելուչ բանախօսութեամբ մայթ կալցեն ամենայն կարելի կերպիւ կաթեցուցանել զմխիթարութիւն ՚ի սիրտ սգաւորաց և զօրացուցանել զմիտս նոցա՝ զի կարողասցին մեղմացուցանել զբնաւորական ազդեցութիւն սաստիկ կրից իւրեանց:

Քանզի որպէս և յայտ է՝ մարմինն բնաինքեան իսկ ՚ի վերայ մեռելոյ իւրոյ զգայ զսաստիկ ցաւս. յորժամ կարօտի զի ցաւոց իւրոց սփոփիչ գտցին բարեկամք և ոչ զի առաւել ևս սաստկացուսցեն զկսկիծ նոցա և յաւելցեն զցաւս ՚ի վերայ ցաւոց.

## Գ.

Ո՛չ է կանայք մի՛ ևս շրջապատեալ զդիով ննջեցելոյն մի զկնի միոյ կարգաւ յօրինեսցեն զողբս ՚ի քանի ժամս զանազան յիշատակութեամբ հին և նոր ննջեցելոց կամ իրաց կամ գործոց. այլ եդեալ զդին յայլ սենեկի եթէ գուցեն սենեակք. և կամ եդեալ ՚ի նմին տան ուր ինքեանք գտանին. նստցին հեռի ՚ի դագաղէն յիւրաքանչիւր տեղիս և առանց գոռալոյ և ճչալոյ և ծեծելոյ զգլուխս՝ որք վնասակարք են մարմ-

նոյ և հոգւոյ, համեստ կերպիւ կառավարեսցեն զուգաւորութիւն իւրեանց ըստ օրինակի ուսեալ և կանոնաւորեալ քրիստոնէից. և 'ի ժամ հանելոյն 'ի տանէ զդին, մատուսցեն իւրաքանչիւրքն զհրաժարական զողջոյնն չափաւորեալ ողբովք և արտասուօք.

Դ.

Զի բարեկամքն մի և ոչ ընտրեսցեն զվարձուք այն է փէրաջոյն վերարկուս, յորմէ ոչ մեռելոյն և ոչ տեարց մեռելոյն ոչ ինչ ընաւ գտանի օգուտ՝ այլ 'ի զուր կորուստ վարձուն փէրաջին և առիթ ծաղրական և վնասակար արարողութեց լինի միայն. բայց եթէ հարկաւոր եղիցի՝ միայն տէրն ննջեցելոյն մի դիպազարդ արկցէ 'ի վերայ առանց շարական ասելով տանելոյ. և խափանեսցի եղկելի այսուհետև քահանայից շարական ասելով սգաւոր և վերարկու տանելն բոլորովին.

Ե.

Զի որպէս արքն՝ նոյնպէս և կանայքն ընդհետ գագաղի ննջեցելոյն երթիցեն 'ի սուրբ

եկեղեցի. որովհետև մեծագոյն անհարազատութեան նշան է այն սէրս կանանց առ իւրեանց ննջեցեալն՝ զի հանեալ 'ի տանէ ըզննջեցեալն, իւրեանք նստին անհոգաբար 'ի տանն. այլ որպէս վայելուչն է Ճշմարիտ սիրելոյն և հարազատ ընտանոյն, երթիցեն զհետ դագաղին մինչև 'ի սուրբ եկեղեցի. և անդ առաջի սուրբ սեղանոյն ուր բազմի Քրիստոս որ Տէր է կենդանեաց և մեռելոց, հեղցեն զջերմեռանդութեան արտասուս իւրեանց վասն թողութեան մեղաց ննջեցելոյն իւրեանց՝ և այնպէս յանձն արարեալ Աստուծոյ մեծ ողորմութեանն զսիրելի ննջեցեալն իւրեանց, Ճանապարհորդեսցեն զնա 'ի գերեզման՝ և իւրեանք վերադարձցին 'ի տունս իւրեանց.

Բայց այսու ամէն զգուշ լիցին կանայք, զի 'ի մէջ եկեղեցւոյ ուր բազմեալ գտանի ահաւորն Աստուած՝ մի ինչ անպարկեշտութեան և ընդդէմ Աստուածային պատուոյ գործադրութեան երևեցուսցեն անպարկեշտ գոռալով և Ճչալով. որով փոխանակ քաղցրացուցանելոյ զԱստուած, առաւել ևս ունին դառնացուցանել զնա. այլ որպէս վայելէ բարեպաշտութեան՝ մատուսցեն Աստուծոյ

զխնդրուածս իւրեանց վասն ողորմութեան իւրեանց սիրական ննջեցելոյն. և այնպէս գեղեցիկ քրիստոնէութեամբ պահեսցեն զհարազատութիւն սիրոյ իւրեանց առ իւրեանց սիրելի ննջեցեալն և առ Աստուած։

## Զ.

Ժողովք կանանց յետ վերադառնալոյն յեկեղեցւոյ է ողբաւորացն 'ի տուն, ճաշակեսցեն անդէն 'ի միասին զպատրաստեալ ուտելիսն՝ որ լինիցի թեթև որպէս զնախաճաշիկ այսինքն է զակուսկա. և գնասցեն իւրաքանչիւրքն 'ի տունս իւրեանց. և մի՛ ևս այսուհետև ժողովք բազմութեան կանանց նստցին 'ի տունս ննջեցելոյն շարունակաբար զտիւ և զգիշեր բաց 'ի մերձազգականացն և յատուկ բարեկամացն. և նոքա ևս ոչ ամենեքեան 'ի միասին բազմութեամբ, այլ համաձայնութեամբ իւրեանց կարգաւ մի զկնի միոյ յիւրաքանչիւրում աւուր երկու երկու կամ երեք երեք։ Այլ թէ քրիստոնէական ջերմեռանդութեամբ յօժար լիցին գնալ երբեմն վասն մխիթարութեան գնասցեն մի մի կամ երկու երկու, ոչ յա-

ռաւօտուց ըստ հին սովորութեան. այլ յետ կէս աւուր 'ի պատշաճ ժամանակի. և 'ի գնալն իւրեանց մի՛ ընդ պատճառս տացեն սգաւորացն աւելի տրտմութեան լալով իւրեանց կամ զտրտմական բանս խօսելով. այլ ճշմարիտ բարեկամութեան վայելուչ կերպիւ ամենեքեան ըստ իւրեանց կարողութեան զմխիթարական բանս խօսելով, ջանասցեն փարատել 'ի սրտից նոցա զսուգ և զտրտմութիւն:

## Է.

Ժողովումն կանանց վասն յեկեղեցի տանելոյ զսգաւոր կանայսն. կամ վասն 'ի գերեզման տանելոյ՝ խափանեսցի բոլորապէս. այլ վասն յեկեղեցի տանելոյ յաւուրն երրորդի՝ երթիցէ ծխատէր քահանայն և հրաւիրեսցէ զնոսա գնալ յայն եկեղեցի, որ գտանիցի մօտ 'ի տուն իւրեանց՝ և կամ յայն եկեղեցի, ուր սգաւորքն կամեսցին. և ինքն յառաջ քան զնոսա անցեալ գնասցէ 'ի նոյն եկեղեցի՝ ուր զնոսա հրաւիրեն. և յետ ժամուն գնացեալ 'ի տուն, ասասցէ անդ զհոգւոց և ելեալ

գնասցէ 'ի գործ իւր։
Իսկ վասն 'ի գերեզման տանելոյ ժողովս կանանց բոլորապէս վերջացեալ եղեն. այլ երբ և ցանկասցեն սգաւոր կանայքն գնալ 'ի գերեզման՝ ընդ իւրեանց տանն քահանային միայն երթիցեն. և օրհնել տուեալ զգերեզմանն՝ վերադարձցին ։

## Բ.

'Ի տանէ ննջեցելոյն Սև բաժանելն ազգակցաց և բարեկամաց՝ արգելեալ եղիցի բոլորապէս. զի թող զայն որ օտար է 'ի համազգային սովորութեանց հայրենի ազգի մերոյ. մեծ անվայելչութիւն ևս վերաբերէ ընդդէմ ճշմարիտ բարեկամութեան և ըստոյգ սիրելութեան՝ երբ բարեկամք և սիրելիք զգենուն զսև որպէս բարեկամ և սիրելի. բայց ոչ իւրեանց ծախիւք՝ այլ ծախիւք վախճանեալ բարեկամին, որ է գործ ամենևին անարժան ճշմարիտ բարեկամու՟ և ստոյգ սիրելութեան. և առաջի ամենայն լսողաց մեծագոյն նախատինք բարեկամութեան և յայտնի նշանակ աղահութեան.

## Թ.

Երգելեա՛լ եղիցի յանուն ննջեցելոց քէլէս, որ է կերպակուր բաժանելն 'ի տունս բարեկամաց, ընտանեաց, սիրելեաց և դրացեաց և կամ ընդէմ աւետարանին Տեառն կոչելն զբարեկամս և զդրացիս 'ի վերայ յանուն ննջեցելոց պատրաստեալ հացկերութի. որպիսի են եօթնօրէիցն, կամ սուրբ սեղան ասացեալն. և կամ այլ անուամբ յայլ և այլ ժամանակի:

Այլ վասն հացկերութի զոր կամիցի ոք պատրաստել յանուն ննջեցելոց՝ կոչեսցէ միայն զաղքատս, զխեղս, զկաղս, զկոյրս նաև զօտարականս, զաղքատս և զհարուստս համաձայն պաշտելն սուրբ աւետարանութեն Քրիստոսի Աստուծոյ մերոյ. եւս և զհոգևորականս որոց ամ՛ աղբուսան է միշտ արդեամբք նուիրեցելովք յանուն ննջեցելոց և կենդանեաց ըստ հրամանին Աստուծոյ: Իսկ հարսանիքն՝ մկրտութիւնն և խրախճանութիւնն որպէս և ոք կամեսցի՝ ինքն գիտասցէ կոչել զո ոք և արժան համարիլ ունիցի. զազգականս, զսիրելիս, զբարեկամս և զդրացիս:

## Ժ.

Տնօրինեմք, զի որպէս վայելէ հարազատ բարեկամութեան և մնացւանդ քրիստոնէական բարեկարգութեան. այնպիսի բարեկամք որոց կանայքն պարտաւոր համարեցեալք լինին վասն մերձ ազգակցութեան կամ յատուկ բարեկամութեան նստիլ առ սգաւորսն 'ի տան ննջեցելոյն, այնոքիկ վասն սգաւորայն մի մի ժամ ինքեանք պատրաստեսցեն 'ի տան իւրեանց միայն երկու կերակուր բաց 'ի պանրոյ և կանանչեղինաց. և բերեալ անդէն կերակրեսցեն զսգաւորսն մինչև ցեօթն օր. իսկ 'ի լրանալ եօթն աւուրն երթիցեն իւրաքանչիւրքն 'ի տուն իւրեանց։

Եւ ահա այս իսկ համարեալ լինի հարազատ բարեկամուե̄ և քրիստոնէական բարեկարգութեան վայելուչ գործ՝ գովանի առաջի Աստուծոյ և առաջի ամ̄ մարդկան։

## ԺԱ.

Վասն հասարակութեան օգտի՝ զի մի բազմութիւնն կորուսցէ զժամանակ օգտակար

[library stamp]



աշխատութեանց. ննջեցելոց Ս.յգ. կատարելոյ կարգն՝ բազմութիւնն կատարեսցէ յայնմ եկեղեցւոջ՝ որոյ է ժողովուրդ ննջեցելոյն. միայն երթիցէ 'ի գերեզմանատան քահանայն՝ և անդ 'ի վերայ գերեզմանին կատարեսցէ նա յատկապէս ։

## Ժ.Բ.

Յանձն առնեմք քահանայական դասուց մեր նոցա որք յԱստուածակոյս կողմանէ դաստիարակք են ժողովրդեան յանձնեցելոյ իւրեանց՝ մի՛յթ ունիցին հայրօրէն խնամակալութեամբ և բարեջան հոգւունակութեամբ իւրաքանչիւր քահանայ զիւր ժողովրդոց զդաւորսն խրատել, ուսուցանել և հնազանդեցուցանել սոյն տասն գլխովք նշանակեալ քրիստոնէավայելուչ և հասարակաօգուտ բարեկարգութեանց և ջանալ, զի մի՛ անհոգութեամբ կամ թուլութեամբ իւրեանց գտանիցին պատճառք պակասութեան հոգևորական վայելչութեանց քահանայական հովուունց, և սնուցիչք անցեալ անվայելչութեանց ժողովրդեանն յանձնեցելոց իւրեանց յերկ-

նաւոր ՙՔահանայապետէն՝ հաւատացեալ Թէ ունի նա պահանջել յիւրաքանչիւրոց զհաշիւս քանքարոց իւրոց և հատուցանել զվարձս ըստ վաստակոց համաձայն Առաքելական վկայութեան՝ Թէ Երիցունք կրկին պատուոյ արժանի եղիցին մանաւանդ որք աշխատիցին բանիւ և վարդապետութեամբ ։

ԱԾՐԳ ։



